Վահան Տերյան

Դավաճան հուշեր

Անվերջ գիշերիս անամոքական մենակության մեջ.
Հետ կանչեցի քեզ, անդարձ օրերի ցնորոտ երկիր,
Ուզեցի, որ դու պայծառ ու մաքուր լույսերով անշեջ
Եվ խորհուրդներով դյութես վերստին սիրտըս տարագիր:

Եվ իմ հոգու մեջ ես խենթ կանչեցի, ճչացի վհատ,
Երբ տեսա, ինչպես մեռած օրերի խումբը դժնդակ
Սահեց իմ առաջ, որպես անիծված կյանքի մի հեքիաթ
Եվ երազածըս թվաց նենգալի, չար և այլանդակ:

Դառը մենության և անհուսության մթին վիհերում
Ես իմ թույլ սիրտը կամեցա քաղցր հուշով ամոքել,
Սակայն մթնել էր, դառն էր և դաժան անցյալի հեռուն.
Լուսեղեն հուշեր, դավաճանել եք ինձ դո՛ւք էլ, դո՛ւք էլ: